

քանդի ոչ ընկալան զքարոզութիւն նորա²»
եւ «զնորածեւ վարդապետութիւն³»:

Այս պատճառաւ ալ շուտով կը թողու
Մովսէս Տաթևը եւ կ'երթայ Եղինզեան (Եղե-
զիս) գիւղը, ուր հաստատուած էր նոր Անա-
պատը, «առ Սարգիս եպիսկոպոսն եւ առ տէր
Կիրակոսն, ըստ նախկին ուխտադրութեանն
իւրեանց, զոր պայմանեալք էին յԵրուսա-
ղէմ. եւ անդէն յԱնապատին կալաւ իւր դա-
զար բնակութեան»: Անկէ դուրս կու դար
ժամանակ առ ժամանակ, կը շրջէր քարոզու-
թեամբ գիւղէ գիւղ, քաղաքէ քաղաք, եւ
կրկին կը դառնար Անապատ (Առ. Դաւր.
288):

Այս տեղ կը յիշէ գինքը Մինաս երէց
արդէն 1613ին, որ նոյն թուին կ'օրինակէ
Հարանց վարք մը⁴ «ի յաշխարհին էճանանու
եւ ի գեղջէս Եղինզեան, որ եմ ծնեալ եւ
սնեալ ի սմայ, ի սուրբ եւ հրաշափառ ուխ-
տիս Ստաթէի սուրբ առաքելոյն... ի առաջ-
նորդութիւն տէր Մեսրոպ եպիսկոպոսէ,
ի նորրնծայ եւ ի կրկին լուսատու հոգւոց
մերոց գրաբունապետն գտէր Մովսէս վար-
դապետ ի բազմապատիկ լուսաւորիչ աշխար-
հիս Հայոց՝ գտուրբ յանապատն Ստաթէի.
որ եւ պատճառ եղեւ իմաստուն Հայրն Կի-
րակոս՝ ի յԱրեւմտից գիմեալ յԱրեւելս ողոր-

² Առ. Դաւրիժեցի, էջ 287:

³ Ձեռ. էջմ. 2309:

⁴ Հ. Աճառեան՝ Յուլյակ Հայերէն ձեռագրաց
Թաւրիզի, էջ 99—100: